Պ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՆՅՈՒԹԵՐ
ՄԱԿԱՐ ԵԿՄԱԼՅԱՆԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հսկայական են Մ. Գ. Եկմալյանի ծառայությունները հայոց հոգևոր երաժշտության ուսումնասիրության, հրապարակման և հայ ու օտար հասարակայնությանը ծանոթացնելու գործում: Այսօր մեր բնութում և հոգևոր տաճարներում հնչող հնագույն հայ երգեցողության գոհարներից շատերի ներդաշնակողը և առաջին ուսուցանողը նա է եղել: Եվ այնուհանդերձ՝ քիչ բան գիտենք Եկմալյանի ապրած օրերի, որոնումների ու հիասթափությունների մասին: Հրապարակի վրա ցայժմ չկա քիչ թե շատ հաչող կազմված մի ժողովածու, որն ի մի հավաքեր նրա նամակներն ու գրությունները, կյանքին ու ստեղծագործությանը վերաբերող վավերագրերն ու հուշերը, թո՛ղ որ տակավին չի հրատարակված նաև նրա երաժշտական ժառանգության հատընտիրն ամփոփող որևէ ժողովածու: Սույն հրատարակմամբ մեր հաստատ լոման ենք մուծում հոգուտ Եկմալյանի նամակների և նրա կյանքին ու ստեղծագործությանը վերաբերող վավերագրերի հավաքմանն ու հաջորդաբար լույս ընծայելու գործին:

Ստորև ներկայացվող նյութերը կարևոր սկզբնաղբյուրներ են Մ. Եկմալյանի (1856—1905) կյանքի ու գործունեության պետերբուրգյան շրջանի լուսաբանության համար, երբ տեղի երաժշտանոցում ուսանելուց զուգընթաց, ինչպես նաև ավարտելուց հետո, նա կազմակերպում է հայոց եկեղեցու երգչախումբը, որի ելույթների մասին գովասանքով են արտահայտվել խմբավարական արվեստի մեծ գիտակները, ի դեմս ռուս հանրահանաչ երգահան Միլի Ալեքսեևիչ Բալակիրևի (1836—1910), ապա նաև Պետերբուրգի հայ հասարակության ներկայացուցիչները:

Եկմալյանի խմբավարական արվեստի հմայքն այնքան մեծ է լինում, որ ժամանակ անց, երբ նա արդեն աշխատում էր Տփղիսում, մինչ անհրաժեշտությունն է առաջ գալիս Պետերբուրգի հայոց եկեղեցու երգեցողությունը կանոնավորելու նպատակով նոր երգչախումբ կազմելու, հայ հասարակության երևելիները հատուկ հանձնարարությամբ առաջարկում են դարձյալ նրան հանձնարարել այդ դժվարին գործը: Եկմալյանն ընդառաջ է գնում ազգակիցների բաղձանքին և պայմանավորված ժամանակամիջոցում կատարում առաջադրանքը, միայն թե եկեղեցական վարչության ազդեցիկ անդամներից մեկ-երկուսը ինչ-ինչ պատճառաբանություններով դանդաղեցնում են նրան:

Հրատարակվող վերջին գրությունները ի հայտ են բերում այդ տհաճ երևույթը:

Նյութերը քաղված են Լենինգրադի մարզի պետական պատմական դիվանի հավաքածուներից (ֆ. 1754, ց. 1, գործ 1225): Հայերեն ընագրերը տպագրվում են անփոփոխ, ռուսերենները թարգմանված են մեր ձեռքով:

Պ. ՏԱՅՇՅԻ

[Թարգմանություն ռուսերենից]

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅ-ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ

Պատիվ ունեմ դիմելու խորհրդին հետևյալ խնդիրքով:

Գտնվելով նյութական նեղ վիճակում, խնդրում եմ խորհրդին՝ առ 1 հուլիսի 1888 թ. նշանակելու ինձ թոշակ, որպիսին ինձ տրվում էր մինչև երգչախմբի հետ իմ պարապմունքները՝ շարունակելու համար իմ երաժշտական կրթությունը տեղիս երաժշտանոցում:

Ինչ վերաբերում է նրան, թե ինչ միջոցներով եմ ապրել մինչև վերջին ժամանակ-

ներս, ապա պետք է ասեմ, որ սեփական վաստակ չունենալու պատճառով ես հարկադրված եմ եղել օգնության համար շարունակ դիմել կողմնակի անձանց:

Խորհրդի՝ ինձ ներկայացրած պահանջին՝ վկայագրի վերաբերյալ, ես կարող եմ այդպիսին բերել պալատական երգչախմբի կառավարիչ պարոն Բալակիրևից: Եթե վկայագիր է պետք նաև երաժշտանոցից, ապա, ինչպես իմացա, խորհուրդը դրա համար պետք է գրավոր դիմի երաժշտանոցին. երաժշտանոցի դասընթացն ավարտելուց հետո իմ բերած օգուտի գրավականն այն հաջողություններն են, որոնք ունեցել է երգչախումբը իմ պարապելու ժամանակամիջոցում:

Եկմալյանց

<1887, դեկտեմբեր, Ս. Պետերբուրգ>

<**Մակագրություններ**> «Ինձ թույլ եմ տալիս հրավիրելու խորհրդի պարոնայք անդամների ուշադրությունը պ. Եկմալյանցի թշվառ վիճակի վրա, հուսալով հնարավոր աջակցություն»: Այնուհետև հաջորդում է դժվարընթեռնելի մի ստորագրություն՝ **Գ. Մ. Աբամելիք**(*): «20 դեկտեմբերի 1887 թ., № 317»: «Գործ № 8-ում»:

ԼՄՊՊԱ, ֆ. 1754, գ. 1225, թ. 11ա—բ:

[Թարգմանություն ռուսերենից]

<Մ. ԲԱԼԱԿԻՐԵՎԻ ԿԱՐԾԻՔԸ Մ. ԵԿՄԱԼՅԱՆԻ ՄԱՍԻՆ>

Սույնը ներկայացնող Մակար Գրիգորի Եկմալյանը ցույց է տվել իր օգտակարությունը տեղիս հայոց եկեղեցում՝ կազմելով եկեղեցական երգչախումբ, որը իր ղեկավարությամբ, կիրակնօրյա և տոնական ժամերգությունների ժամանակ, կատարում է հայոց եկեղեցու հնօրյա երգեցողությունը՝ իր իսկ ներդաշնակմամբ և Աստուծո տաճարին պատշաճող վեհությամբ: Հետևաբար և անշամբ խիստ օգտակար եմ գտնում պարոն Եկմալյանցին հնարավորություն տալ՝ ավարտելու իր երաժշտական կրթությունը տեղիս երաժշտանոցում, քանի որ կարևոր գիտելիքների տիրապետման հետ միաժամանակ կավելանա նաև նրա բերած օգուտը ի փառս սուրբ եկեղեցու և նրա արժանահարգ ծիսակատարության:

Մ. Բալակիրև

Ս. Պետերբուրգ, 1887, դեկտեմբերի 16

<**Մակագրություններ**>

«20 դեկտեմբերի 1887, № 213: Գործ № 8-ում: Հարցում անել երաժշտանոցին Եկմալյանցի ընդունակությունների և հառաջադիմության մասին, ինչպես նաև կարելի՝ է հուսալ, որ ս. թ. հուլիսին նա կավարտի ուսման ընթացքը»:

ԼՄՊՊԱ, ֆ. 1754, գ. 1225, թ. 10:

[Թարգմանություն ռուսերենից]

Ռուսական կայսերական
երաժշտական ընկերություն
Ս. Պետերբուրգյան բաժանմունք
Երաժշտանոց
9 հունվարի 1888 թ.
№ 889
Թատերական փողոցում. ներքին
գործերի մինիստրության
շենքում.

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ,

Ի հետևումն 1887 թ. դեկտեմբերի № 40 գրության պատիվ ունեմ հաղորդելու, որ պարոն Եկմալյանցը Ս. Պետերբուրգի երաժշտանոցի ուսանող է 18...[2] թ. սեպտեմբերից, պրոֆեսոր Սոլովյովի դասարանում հատկապես սովորում է կոմպոզիցիայի տեսություն և ընթացիկ տարվա մայիս ամսին պետք է հանձնի ավարտական քննություն, որը, ամենայն հավանականությամբ, կավարտի հաջողությամբ:

(կնիք) Երաժշտանոցի տնօրեն՝
Ա. Գ. ՌՈՒԲԻՆՇՏԵՅՆ

Տեսուչ՝ Ա. ԲԵՆՀԱՐԴ

<**Մակագրություններ**> «11-ն հունվարի 1888 թվական, № 8: Լսված է հունվարի 12-ի նիստում:—Հորս ամսվա համար նշանակել 100 ռուբ. թոշակ: Գործ № 8-ում».

ԼՄՊՊԱ, ֆ. 1754, գ. 1225, թ. 13:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆԱՑ ՄԵԾԱՐԳՈ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՈՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԻՑ ԽՆԴԻՐ

Ահա՝ անցել է բավականի ժամանակ այն օրից, երբ մենք՝ հայ հասարակությունս, զրկված ենք մնացել այն քաղցր և հոգեբուխ երգեցողությունից, որ մեզ տալիս էր երաժիշտ Եկմալյանցի կազմած խումբը, որ յուր տեսակի մեջ անմնան էր և բոլորովին մի նոր բան՝ ամբողջ հայության մեջ:

Մենք լսում էինք մի երգեցողություն, որ հատուկ է միայն լուսավորյալ ազգերին և ճաշակ«ը» զարգացած հասարակության: Երբ օտարները մտնում էին մեր եկեղեցին,

[1] Համապատասխան ամսաթիվը բնագրում չի նշված:

[2] Գրության բնագրում հաջորդ երկու թվանշանները բացակայում են, չնայած Եկմալյանը Ս. Պետերբուրգի երաժշտանոց է ընդունվել 1879 թ.:

աքանչանում էին այդ երգեցողությունը լսելով և յուր<սանց> արժանավորյալ հարգա էին մատուցանում հայ ժողովրդյան: Բայց այժմս, ցավոք սրտի, պետք է խոստովանած, որ այդ օրվանից հետո մեր երգեցողությունը նման է մի կատարյալ խավոսի: Մենք հրավիրեցինք գործին այնպիսի անհնուտ խմբապետներ, որոնք ականջ ծակելու չափ աղավաղեցին մեր երգեցողությունը: Մենք կարճ ժամանակամիջոցում շինեցինք մի այնպիսի գործ, որը օտարները տարիներով չեն կարողանում ձեռք բերել, և արժանի էր ամեն տեսակ գովեստի և խրախուսանաց խորհրդիդ լուսամիտ անդամոց: Եվ երբ մենք օր ավուր սպասում էինք յուր կատարելության հասցնելու, արդեն չորացրինք, որի խոստովանիլը ցավ է մեզ: Ուստի դիմում ենք այս խնդրագրով մենք՝ Պետերբուրգի հայ հասարակությունս, Ձեզ՝ խորհրդիդ արժանապատիվ անդամոց, և լիահույս ենք, որ անտես չեք առնիլ և գործին յուր վախանը տալով կվերացնեք զանազան անախորժ կարծիքներ և նորից նույն պաշտոնը ստանձնելով պարոն Եկմալյանցին, դարձյալ մեզ լսեցնել կտաք այն քաղցր սազմոսերգությունները, որով մեզ մխիթարած կլինեք հոգևորապես և հարգած կլինեք մեր խնդիրքը: Համաձայն այս խնդրագրին ստորագրում ենք մենք՝ Պետերբուրգի հայ հասարակությունս.

Հ. Տեր-Ստեփանյանց: Ք. Բաշինջաղյանց: Ս. Հովսեփյան: Գ. Միրիմանյանց: Սողոմոն Ալիշարումյանց: Ա. Ա. Լիլիպարյան: Կ. Փարեմուզյան: Կ. Լիսինյանց: Հ. Գաբայանց: Պ. Գրիգորյանց: Ա. Ամիրաղյանց: Բաղդասար Գոձյանց: Միքայել Փարսադայանց: Բ. Միրիմանյանց: Բ. Տեր-Ստեփանյան: Գ. Տեր-Սիմեոնյանց: Գ. Ավետիսյանց: Հ. Բեգլարյան: Արտեմի Եվանգուլյանց: Ա. Սերեբրակյան: Խոջա-Էնինթյանց Динибегов: Տ. Տեր-Մաթեոսյանց:

1889 թ. հոկտեմբերի 13
Ի Պետերբուրգ

<**Մակագրություն**> Прихотани с выражением порицания хору и просьбою пригласить Экмалиана: 14 октября 1889, № 297.

[Միականները՝ երգչախմբի հանդեպ կշտամբանքի արտահայտությամբ և Եկմալյանին հրավիրելու խնդրանքով: 14 հոկտեմբերի 1889, № 297]:

ԼՄՊՊԱ, ֆ. 1754, գ. 1225, թ. 17ա—բ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՅԱՑ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ԽՆԴՐԻՐ

Մենք՝ ի ներքո ստորագրյալ Ս. Պետերբուրգի բնիկ ծխականներս, կրկին անգամ դիմելով հարգելի խորհրդիդ անդամոց՝ Ձեր խորին ուշադրությունն ենք հրավիրում տեղվույն եկեղեցվո տգեղ և անհերդաշնակ երգեցողության վրա, որը մեր միակ հոգևոր մխիթարությունն է եկեղեցում և միանգամայն դեպի ջերմեռանդություն գրգռողը առ Աստված:

Անա անցավ այն օրից երկու տարի, երբ մենք ամենայն բավականությամբ և խոր տպավորության տակ հաճախում էինք եկեղեցի ամենայն կյուրակեի՝ լսելու այն քաղցր և ներդաշնակ խմբի երգեցողությունը, որը պատրաստել էր պ. երաշիշտ Եկմալյանցը, բայց, դժբախտաբար, զանազան խոչընդոտ պատճառներից ոչնչանալով այնպիսի գեղեցիկ խումբը՝ նորա տեղ հրավիրվեցան գործին անհնուտ և անուս խմբապետներ, որոնք չկարողացան արդարացնել յուրյանց պարտականությունը, այլ աղավաղեցին եկեղեցվո երգեցողությունը ամենատգեղ եղանակներով: Ուստի՝ այժմ կրկին դիմելով խորհուրդիդ, խոնարհաբար խնդրում ենք անտես չառնել մեր խնդիրը, այն է՝ նորից հրավիրել պ. Եկմալյանցին խմբապետ հանձնելով նորան նորից կազմելու եկեղեցվո երգեցիկ խումբը, որով մեր բարի ցանկությունը կատարած կլինեք:

Васили Тер-Степанов: Динибегов: Բաղդասար Գոձյանց: Տիգրան Տեր-Մաթեոսյանց: ... Հուսիկյան: Գ. Աստվածատրյանց: Հարությունն Գաբայանց: Օհաննես Մելքումյանց: Աղեքսանդր Սերեբրակյան: Մնացական Ամիրաղյանց: С. Паримусов: Н. Мириманьян: Մ. Ուզբաշյանց: Քրիստափոր Բաշինջաղյանց: Խոջա-Էնինթյանց: Սողոմոն Ալիշարումյանց: Կոնստանդին Լիսինյանց: Աղեքսանդր Լիլիպարյան: Կ. Փարեմուզյան: Գրիգոր Տեր-Սիմեոնյանց: Ս. Հովսեփյան: Հովհաննես Տեր-Մաթեոսյանց: Ռուբեն Հովհաննիսյանց: Գաբրիել Միրիմանյանց: Գաբրիել Ավետիսյանց: Հարությունն Բեգլարյան:

Ի Ս. Պետերբուրգ, 1889 թ. հոկտեմբերի 22-ին:

<**Մակագրություններ**> 25 октября 1889 г. № 306. Прихотне с выражением неодобрения хору и просьбою пригласить Экмалиана.

[25 հոկտեմբերի 1889 թ. № 306: Միականները երգչախմբին չնվավանելու խոսքերով և Եկմալյանի հրավիրելու խնդիրքով]:

ԼՄՊՊԱ, ֆ. 1754, գ. 1225, թ. 18ա—բ:

ԶԵԿՈՒՅՑՈՒՄ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԵԿԵՂԵՑՅԱՑ ՀԱՐԳԵԼԻ ԽՈՐՀՐԴԻՆ Մ. Գ. ԵԿՄԱԼՅԱՆԻՑ

Անշուշտ կմտաբերեք 95 տարվա հարգելի խորհրդիդ իսկ արած դիմումը, որով

հանձնարարեցիք ինձ Պետեր<բուրգի> երգչական խմբի կազմակերպության համար ձայներ գտնել՝ գալով Կովկասը: Ես ինքս պարտք համարելով հարգելի խորհրդիդ այդ հանձնարարությունը՝ այստեղ գալուն պես լրագիրների միջոցով հայտարարեցի հարկ եղածը: Հավաքված ձայներից, որքան հնարավոր էր, հագիվ վեց ձայներ գտնվեցին հարմարավոր ու համապատասխան խմբին: Սոցա հետ պարապելով այս ձմեռս՝ սորվեցրի եվրոպական ձայնագրությունը, որչափ հնարավոր էր, և ամբողջ պատարագը քառաձայն երգել: Այժմ որովհետև մոտ է ժամանակը մեկնելու տեղդ, ուստի նախապես հարկ եմ համարում հրավիրել հարգելի խորհրդիդ ուշադրությունը հետևյալ անհրաժեշտ մի կամ երկու կետերի վրա:

ա) Ընդունելով վերոհիշյալ վեց անձանց ի շարս երգչական խմբի, հարկ համարեցի հայտնել նոցա յուրյանց պարտականությունները. օրինակ՝ հիշել մի քանիսը—լինել եկեղեցում ամեն օր, իբրև երգիչ (հիարկե և բոլոր պատարագներին): Բավական չէ չբացակայել եկեղեցուց, այլ պետք է հպատակվել խմբապետին, ճանաչել նորա իրավունքները, լսել նորա հորդորներին՝ երբ կշեղվին յուրյանց պարտավորությանց մեջ (որովհետև խմբապետի պարտավորությունն է սմենա ամսին հարկավոր տեղեկություն ներկայացնել հարգելի խորհրդիդ՝ երգիչների վարուց, բարուց և կենցաղի վերաբերմամբ): Հակառակ դեպքում, երբ երգիչներից որևէ մեկը թերանա յուր պարտավորությանց մեջ՝ չօգտվելով խմբապետի նախօրոք զգուշացուցիչ միջոցներից, այդպիսիին եկեղեցական խորհուրդը կգրկի երգչական խմբից: Ահա վերոհիշյալ պայմանները ընդունող երգիչը կատանա իբր վարձատրություն ամսական 40 ռուբլի և միայն այստեղից Պետերբուրգ գալու ճանապարհածախս՝ Գ-րդ գրնացքով:

բ) Ճանապարհներին մոտիկ ծանոթ լինելով, յուրաքանչյուրին հարկավորում է իբրև ճանապարհածախս առնվազ<ն> 40 ռուբ., ահա թե ինչո՞ւ.

Տփխիսից—Վլադիկավ<կազ> — 15 ռ. ձիով

Վլադիկավկազ<ից>—Պետերբուրգ — 15 ռ. Գ գնացքով:

Ուտելիքի համար—10 ռուբլի

ընդամենը 6 հոգու համար հարկավոր է ուրեմն՝ 40×6=240 ռ.: Եվ այդ ճանապարհածախսը ինդրում եմ փոխադրել որևէ բանկային հաստատության միջոցավ ոչ ուշ մայիսի 15-ը:

գ) Բացի այդ խնդրում եմ հարգելի խորհրդիդ պատվիրել այնտեղի երգիչներին չհեռանալ այս ու այն կողմ, որպեսզի այնտեղ եկած ժամանակս անմիջապես ձեռնարկեմ խմբի կազմակերպությանը, այլապես միայն 6 հոգով չի լինում կազմակերպել խումբը՝ քառաձայնության համար:

1896, ապրիլ 13

Տփխիս

<**Մակագրություն**>.—Հայոց Եկեղեցիների խորհուրդ Պետերբուրգում. Ստացվել է՝ № 151 21 ապրիլի 1896 թ.: Ձևակերպվել է՝ խորհրդում՝ մայիսի 5-ին:

ԼՄՊՊԱ, ֆ. 1754, գ. 1225, թ. 35ա—բ—36ա:

[Թարգմանություն ռուսերենից]

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ

Խորհուրդը ս.թ. հունիսի 23-ի իր վերջին նիստում որոշեց հաղորդել ինձ, որ երգչախմբի առաջին, փորձնական երգեցողությունը ցույց տվեց, որ ես չեմ կատարել խորհրդի հանձնարարությունը, ուստի և դրան վերաբերող բոլոր բանակցություններն առայժմ պիտի ընդհատվեն, և առաջարկում է ինձ մինչև սեպտեմբեր ամիսը շարունակել պարապմունքները երգչախմբի հետ ու այն ժամանակ միայն, երկրորդ անգամ ստուգելուց հետո, կորոշվի երգչախմբի բախտը և իմ վարձատրության խնդիրը:

Պարտք եմ համարում հայտնել խորհրդին նախ և առաջ, որ ինձ անհասկանալի է այն կետը, ուր խոսվում է ինձ արված հանձնարարությունը չկատարելու մասին և ճշգրտորեն չի նշվում թերությունը, ի՞նչը հատկապես չի կատարված, երգչախումբը կազմելո՞ւն է վերաբերում դա, թե՞ նրա արժանիքներին: Ըստ պայմանին՝ ես հանձն էի առել պատրաստելու, իբրև կորիզ, վեց երգիչ և մի խմբավար: Խմբավարին և հինգ երգիչներին արդեն գրավոր ներկայացրել եմ խորհրդին, միայն թե վեցերորդը հարգելի (հիվանդության) պատճառով ուշացավ. հանուն խորհրդի <միջոցների> տնտեսման՝ նրան հեշտությամբ կարող է փոխարինել տեղիս երգիչներից մեկն ու մեկը: Ինչ վերաբերում է այստեղից լրացվող երգիչների հետ պայմանավորվելուն, որ կախված էր խորհրդի ղեկավար անդամից և որը ժամանակին հոգ չի տարել նրանց հրավիրելու, ապա պատասխանատվության ողջ բեռն իմ վրայից թոթափում եմ, պատրաստած լինելով միայն նրանց, որոնք ներկայացել են ինձ:

Երկրորդ. ինչ վերաբերում է երգչախմբի արժանիքներին, ապա ես բավականաչափ հեղինակավոր իրավասու չեմ համարում խորհրդի երեք անդամների կարծիքը և անհրաժեշտ ու իրավացի եմ գտնում այս կիրակի հունիսի 30-ին, ծանոցագրերով հրավիրելու ծխականներին, և ճաշվա ժամերգու-

թյունից հետո առաջարկել իրենց գրավոր կարծիքը տալու ինչպես եկեղեցու հոգևորականների ներկայացուցիչներին, այնպես էլ ներկա եղող ծխականներին, քանի որ նման հոգևոր խնդիրներ վճռելիս ամեն մի ծխական խորհրդի անդամ հավասար ձայնի իրավունք ունի, և որովհետև ես հանձն եմ առել այս փորձն անելու գարնանը և ոչ սեպտեմբերին, հետևաբար սույն ամսի 30-ին, վերջին փորձով այս խնդիրը գլխովին ավարտված եմ համարում և նույն օրն էլ սպասում եմ խորհրդի վերջնական, արդարացի վճռին, հանդերձ ծխականների ստորագրությամբ:

Հազատ արվեստագետ Մ. Գ. ԵԿՄԱԼՅԱՆՑ

24 հունիսի 1896 թվական

<Մակագրություններ>

«Ձեկուցել խորհրդին, նրա առաջին իսկ նիստում (հետևում է մի անորոշ ստորագրություն՝ Հարու...՝): Ձեկուցված է խորհրդին, 1896 թ. հուլիսի 4-ին: Այս դիմումը, իբրև անհիմն և իրավական հիմունքից զուրկ, թողնել անհետևանք (նորից նույն ստորագրությունը՝ Հար...՝)»:

ԼՄՊՊԱ, ֆ. 1754, գ. 1225, թ. 41ա—բ:

[թարգմանություն ռուսերենից]

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԴԻՄՈՒՄ

Սույն հունիսի 23-ին խորհուրդն ինձ առաջարկել էր մնալ մինչև սեպտեմբեր ամիսը, բայց քանի որ առաջուց ես արդեն հայտնել և խորհրդի հետ էլ պայմանավորվել էի, որ հուլիսի 1-ից այն կողմ չեմ կարող մնալ այստեղ, ինձ հանձնարարված գործն համարում եմ ավարտված, առավել ևս, որ հունիսի 23-ին և 30-ին եկեղեցում արածս երկու փորձերից հետո ես արժանացել եմ հոգևորականների ու ծխականների հավանությանը:

Ահա՛ ինչու, հանուն մեր եկեղեցու, մի կողմ թողնելով անձնական հաշիվները, առաջարկում եմ խորհրդին տասն ամիս տեվողությամբ պայմանագիր կնքել իմ բերած և պատրաստած երգիչների հետ:

Իմ՝ խմբավար նշանակած պարոն Պոպովի վերաբերմամբ էլ պարտք եմ համարում զգուշացնել, որ նրա հետ վերջնական պայմանագիր դեռ չի կնքված, և ես նրան հրավիրել եմ միայն նրա համար, որ խորհուրդը հրաժարվեց պահանջված գումարը տալու Տփղիսիում իմ պատրաստած խմբավարին: Որովհետև ես այսօր մեկնում եմ, ուստի խնդրում եմ վերջնահաշիվ կատարել ինձ հետ և վճարել ինձ հասանելիք վարձատրությունը:

Սույն խնդրագրի պատասխանը խնդրում եմ հասցեագրել Լայպցիգի երաժշտանոցին, իմ անվամբ:

Մ. ԵԿՄԱԼՅԱՆ,

3 հուլիսի 1896 թ.

Ս. Պետերբուրգ

<Մակագրություններ>

«Նտացված է 3 հուլիսի 1896: Ձեկուցված է խորհրդին՝ 2(sic!) հուլիսի 1896: Դիմումն, իբրև անօրինական, թողնել անհետևանք: Հար...»:

ԼՄՊՊԱ, ֆ. 1754, գ. 1225, թ. 40ա—բ: